

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Երևանի պետական համալսարանի

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի

2026 թ. ապրիլի 15-ին կայացած թիվ 11 նիստի

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2026 թ. ապրիլի 15-ին կայացած թիվ 11 նիստը նախագահում էր ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան, կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը: Գիտական խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 25-ը:

Կ. Ղազարյանի կողմից ներկայացվեց նիստի օրակարգը, որն դրվեց քվեարկության և հաստատվեց միաձայն:

Օրակարգ.

1. ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված մրցույթներին կենսաբանության ֆակուլտետի կողմից ներկայացված հայտերի երաշխավորության հարցը:
2. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսումնական պլաններում իրականացվող փոփոխությունների վերաբերյալ հարցը:
3. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի 2016-2020 թթ. հեռակա ասպիրանտ Գայանե Հովհաննեսի Պետրոսյանի ատենախոսության թեմայի վերահաստատման և գիտական ղեկավարի փոփոխության հարցը:
4. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առկա և հեռակա ուսուցմամբ ուսանողների առցանց հարցումների քննարկման հարցը:
5. Ընթացիկ հարցեր:

1. ԼՄԵՑԻՆ՝ ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված մրցույթներին կենսաբանության ֆակուլտետի կողմից ներկայացված հայտերի երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան, կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, Կենսաբանության ԳՀԻ տնօրեն, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր Կ. Ա. Թոչունյանը, գիտական թեմաների ընտրության մրցույթին հայտ ներկայացրած աշխատակիցները, որոնք սալիկաշարի միջոցով գիտական խորհրդի անդամներին համառոտ ներկայացրեցին նախագծերի նպատակը, ակնկալվող արդյունքները, համագործակցության հնարավորությունները և այլն: Կ. Ա. Թոչունյանը նշեց, որ ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc-Armenia 2026» մրցույթին մասնակցելու համար հայտ է ներկայացրել Իռլանդիայի Քորք

համալսարանական քոլեջի գիտաշխատող Շիվանկար Ագրավալը՝ «*Rhodotorula mucilaginosa* լիպիդ կուտակող խմորասնկի միջոցով ագրոարդյունաբերական թափոնների շրջանաձև արժևորման կիրառումը՝ լիպիդների և կարոտինոիդների կայուն արտադրության համար» թեմայով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել Իռլանդիայի Քորք համալսարանական քոլեջի գիտաշխատող Շիվանկար Ագրավալի կողմից ներկայացված «*Rhodotorula mucilaginosa* լիպիդ կուտակող խմորասնկի միջոցով ագրոարդյունաբերական թափոնների շրջանաձև արժևորման կիրառումը՝ լիպիդների և կարոտինոիդների կայուն արտադրության համար» նախագծի մասնակցությունը, ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc-Armenia 2026» մրցույթին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր-2026» մրցույթին մասնակցելու համար հայտ ներկայացրած Անժելա Սարգսյանը, Մարիամ Շահինյանը, Անահիտ Շիրվանյանը, Միքայել Գինովյանը, Ինեսա Ավագյանը: Ստորև ներկայացվում են մրցույթին հայտ ներկայացրած մասնակիցների հակիրճ ելույթները:

1. ԵՂՀ Կենսաբանության ԳՀԻ Գենոմային անկայունության և մոլեկուլային մուտագենեզի խմբի գիտաշխատող, կ.գ.թ. Անժելա Աշոտի Սարգսյանը ներկայացրեց «Մարդու բջիջներում ճառագայթման հակաուռուցքային ազդեցության խթանումը միջբջջային միտոքոնդրիումային փոխանցման և գենոմային անկայունության միջոցով» նախագիծը: Անժելա Սարգսյանը նշեց, որ առաջարկվող ծրագրի ընթացքում Ընդհանուր և մոլեկուլային գենետիկայի լաբորատորիայում կհիմնադրվի գենոմային անկայունության կարգավորման գործընթացում մարդու բջիջների միջև միտոքոնդրիումային տեղափոխությունների ուսումնասիրության նոր խումբ: Նախագիծը կիրականացվի Սորբոնի համալսարանի Փարիզի (Ֆրանսիա) Սենայի կենսաբանության ինստիտուտի միտոքոնդրիումային դինամիկայի և միջբջջային հաղորդակցության ուղղությամբ առաջատար մասնագետ, պրոֆեսոր Օննիկ Ագբուլուրի և Յենայի (Գերմանիա) Ֆրիդրիխ-Շիլլերի անվան համալսարանի Մարդու գենետիկայի ինստիտուտի մոլեկուլային բջջագենետիկայի ոլորտի միջազգային բարձր համբավ ունեցող պրոֆեսոր Թոմաս Լիրի ղեկավարությամբ: Նախագիծը եզակի հնարավորություն կընձեռի Հայաստանում միտոքոնդրիումների միջբջջային փոխանակության ուղղության ներդրման և ԵՂՀ-ի ու Սորբոնի համալսարանի միջև նոր համագործակցային կապերի ստեղծման համար: Նախագծի նպատակն է ձևավորել գիտահետազոտական խումբ, որը կուսումնասիրի միջբջջային միտոքոնդրիումային փոխանցման և գենոմային անկայունության փոխազդեցությունը մարդու բջիջներում արագացված էլեկտրոնների և ռենտգենյան ճառագայթների իոնացնող ճառագայթման նկատմամբ պատասխանի ձևավորման ընթացքում: Մարդու նորմալ (մելանոցիտներ՝ NM, CRL-4059, և ոչ ուռուցքածին կրծքագեղձի էպիթելային բջիջներ՝ MCF-10A, CRL-10317) և ուռուցքային (մելանոմա՝ A375, և կրծքագեղձի քաղցկեղ՝ MCF-7) բջջային գծերում կուսումնասիրվեն թելոմերային անկայունությունը, ԴՆԹ-ի վնասվածքների մակարդակները ԴՆԹ

կոմետների և 8-OHdG վերլուծությամբ, արտաբջջային մտՂՆԹ-ի քանակը, բջջային ծերացումը, ինչպես նաև ռեցիպիենտ բջիջներ փոխանցված միտոքոնդրիոմների մակարդակը: Նախագծի հիմնական խնդիրներն են՝ ստուգիչ և ճառագայթահարված նորմալ ու ուռուցքային բջիջներից միտոքոնդրիոմների անջատում և փոխացում ռեցիպիենտ բջիջներ; դոնորային միտոքոնդրիոմների քանակական գնահատում ռեցիպիենտ բջիջներում՝ միտոքոնդրիոմ-սպեցիֆիկ ներկի կիրառմամբ; ճառագայթահարված NM, A375, MCF-10A և MCF-7 բջիջների կենսունակության գնահատում՝ կլոնոգեն թեստի միջոցով; ճառագայթահարված NM, A375, MCF-10A և MCF-7 բջիջներում թելոմերների երկարության փոփոխությունների գնահատում միտոքոնդրիոմների փոխանցումից առաջ և հետո՝ Q-FISH մեթոդով; NM, A375, MCF-10A և MCF-7 բջիջներում ԴՆԹ-ի օքսիդային վնասվածքի կենսամարկեր 8-OHdG-ի մակարդակների գնահատում միտոքոնդրիոմների փոխանցումից առաջ և հետո՝ ELISA մեթոդով; ճառագայթահարված NM, A375, MCF-10A և MCF-7 բջիջներում ԴՆԹ-ի վնասվածքի մակարդակի գնահատում միտոքոնդրիոմների փոխանցումից առաջ և հետո՝ ԴՆԹ կոմետների մեթոդով; NM, A375, MCF-10A և MCF-7 բջիջներում արտաբջջային ԴՆԹ-ի մակարդակի գնահատում ճառագայթումից առաջ և հետո՝ քանակական ՊՇՌ-ի միջոցով; ճառագայթահարված NM, A375, MCF-10A և MCF-7 բջիջների արտաբջջային մտՂՆԹ-ի հատվածների սեքվենավորում միտոքոնդրիոմների փոխանցումից առաջ և հետո; NM, A375, MCF-10A և MCF-7 բջիջներում բջջային ծերացման գնահատում միտոքոնդրիոմների փոխանցումից առաջ և հետո՝ SA- β -gal և SAHF ներկման մեթոդներով; արագացված էլեկտրոնների և ստանդարտ ճառագայթման հակաուռուցքային ազդեցությունների համեմատում նշված կենսամարկերների հիման վրա և ի վերջո՝ ԵՊՀ-ում նոր գիտահետազոտական խմբի ձևավորում՝ ուղղված միջբջջային միտոքոնդրիոմային փոխանցման գենաթունային ազդեցությունների և բջջային ծերացման գնահատմանը:

2. ԵՊՀ Կենսաբանության ԳՀԻ Ենթաբջջային կառուցվածքների կենսաֆիզիկայի լաբորատորիայի ավագ գիտաշխատող, կ.գ.թ. Մարիամ Աշոտի Շահինյանը ներկայացրեց «Նեյրոդեգեներատիվ խանգարումների հիմքում ընկած որոշ մոլեկուլային մեխանիզմների ուսումնասիրությունը Ալցհեյմերի հիվանդության օրինակով» նախագիծը: Մարիամ Շահինյանը՝ նշեց, որ մարդկության առջև ծառացած գլխավոր խնդիրներից են նեյրոդեգեներատիվ հիվանդությունները: Այս առումով ներկայացվող ծրագիրը կարող է իրենից գիտական և կիրառական հետաքրքրություն ներկայացնել, քանի որ այն ուղղված է Ալցհեյմերի օրինակով նեյրոդեգեներատիվ հիվանդությունների հիմքում ընկած որոշ մոլեկուլային մեխանիզմների բացահայտմանը: Ուսումնասիրությունները իրականացվելու են ֆիզիկական և վիրտուալ փորձերի միջոցով: Նախատեսվող ծրագիրը ղեկավարելու են PhD Աշոտ Մարգարյանը («NovoNordisk» Դեղագործական ընկերության մասնագետ, Դանիա, Կոպենհագեն, հ-ինդեքսը 27) և PhD Լուսինե Դեմիրխանյանը (Բլլինոխի համալսարան, Ներքին բժշկության բաժանմունք, հետազոտող, դոցենտ, ԱՄՆ, Չիկագո, հ-ինդեքսը 14 և 8 գիտական հրապարակում ՄԳՇ-ում (2021-2026 թթ.)):

3. ԵՊՀ Կենսաբանության ԳՀԻ Հիմնարար և ախտաբանական կենսաքիմիայի լաբորատորիայի ավագ գիտաշխատող Միքայել Մարտիկի Գինովյանը ներկայացրեց «Քաղցկեղային բջիջներում և բակտերիաներում բազմադեղակայունության գործոնների թիրախավորումը բուսական ծագման

մոդուլատորների միջոցով» նախագիծը: Միքայել Գինոլյանը նշեց, որ բազմադեղային կայունությունը (MDR) ժամանակակից առողջապահության լրջագույն մարտահրավերներից է, որը բակտերիալ վարակների և քաղցկեղի բուժման ձախողման հիմնական պատճառներից մեկն է: Այն հիմնականում պայմանավորված է բջիջներից դեղամիջոցների ակտիվ արտամղմամբ և բջիջների գոյատևման ազդանշանային համակարգերի խանգարմամբ: Այս խնդրի լուծմանն ուղղված հետազոտությունների իրականացման նպատակով առաջարկվում է ստեղծել նոր ժամանակակից հեռավար հետազոտական լաբորատորիա, որը կուսումնասիրի Հայաստանի ֆլորայի հարուստ և դեռևս չբացահայտված կենսաբազմազանությունը: Նախատեսվում է հայտնաբերել և մշակել բուսական ծագման ակտիվ միացություններ (մոդուլատորներ), որոնք կճնշեն բակտերիաների և քաղցկեղային բջիջների կայունության մեխանիզմները՝ վերականգնելով դրանց զգայունությունը դեղամիջոցների նկատմամբ: Նախագիծը կիրականացվի արտերկրյա համադեկավար, Բելգիայի Լյուվենի Կաթոլիկ Համալսարանի (KU Leuven) գիտական խմբի ղեկավար, դոկտոր Պելլա Մենեշյանի (Bella B. Manshian) հետ համատեղ: Դոկտոր Մենեշյանի միջազգային փորձառությունը նանոկենսատեխնոլոգիաների, թիրախային դեղառաքման և կաթնասունների մոդելների կիրառման ոլորտում վճռորոշ կլինի գիտական խմբի ձևավորման և հետազոտությունների արդյունավետ իրականացման համար: Ծրագրի ընթացքում ԵՊՀ-ի և Լյուվենի Կաթոլիկ Համալսարանի միջև փոխադարձ գիտական այցելությունները կնպաստեն գիտելիքի անմիջական փոխանցմանը, համատեղ փորձերի իրականացմանը ու նոր հետազոտական մեթոդների ներդրմանը: Սկզբնական փուլում համակարգչային մոդելավորման (in silico) մեթոդների կիրառմամբ Հայաստանի ֆլորայի տարբեր դեղաբույսերում պարունակվող ֆիտոմիացություններից կընտրվեն միացություններ, որոնք սպեցիֆիկ կերպով փոխազդում/արգելակում են դեղակայունությունը պայմանավորող գործոնները՝ ներառյալ արտազատող պոմպերը և համապատասխան բջջային ազդանշանային ուղիները: Այնուհետև կիրականացվի դրանց լաբորատոր վալիդացումը in vitro և in vivo մեթոդների կիրառմամբ: Որպես արագ և արդյունավետ միջանկյալ փուլ՝ կկիրառվի միջատների թրթուրների (*Galleria mellonella*) վրա հիմնված in vivo մոդելը՝ միացությունների տոքսիկությունն ու նախնական արդյունավետությունը ստուգելու համար: Առավել արդյունավետ միացությունները կհետազոտվեն կաթնասունների փորձարարական մոդելների վրա: Նախագիծը ոչ միայն կօգնի մշակել և բացահայտել դեղորայքային կայունության հաղթահարման նոր բուժական մոտեցումներ և մոլեկուլային չուսումնասիրված մեխանիզմներ, այլև կբարելավի ԵՊՀ Կենսաբանության ԳՀԻ գիտական ենթակառուցվածքները և կնպաստի միջազգային ինտեգրմանը:

4. ԵՊՀ Կենսաբանության ԳՀԻ Մանրէաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի գիտաշխատող, կ.գ.թ. Անահիտ Համբարձումի Շիրվանյանը ներկայացրեց «Իոնային հոմեոստազի դերը *Saccharomyces cerevisiae*-ի սթրեսային պատասխանի և շրջակա միջավայրին հարմարման մեջ» նախագիծը: Անահիտ Շիրվանյանը նշեց, որ փոփոխվող միջավայրի պայմաններին էուկարիոտ բջիջների հարմարման ուսումնասիրությունը ժամանակակից բջջի կենսաբանության գլխավոր հարցերից է: Տեղափոխիչները և իոնային անցուղիները առանցքային դեր են կատարում բջջային հոմեոստազի կարգավորման և սթրեսային հարմարման մեջ: Պլազմային թաղանթի և ներբջջային տեղափոխիչները (օր.՝ Nha (Na^+/H^+

հակատեղափոխիչ), Pma (պլազմային թաղանթի H⁺-ԱԵՖազ), և Vma (վակուոլային V-H⁺-ԱԵՖազը) ակտիվորեն հեռացնում են իոնների ավելցուկը՝ դրանք արտամղելով բջջից կամ պահեստավորելով վակուոլներում (պրոտոններ, նատրիում, կալիում) կամ էնդոպլազմային ցանցում (կալցիում), այսպիսով պահպանելով հոմոեստազը սթրեսային պայմաններում: Չնայած դրանց կարևորությանը, իոնային հոսքերի բարդ ցանցը, դրանց փոխազդեցությունները, միջօրգանոիդային հաղորդակցությունը և սթրեսային պայմաններում կարգավորումը ամբողջովին ուսումնասիրված չեն: Առաջարկվող հետազոտությունը նպատակ ունի ուսումնասիրել *S. cerevisiae*-ում իոնային հոմեոստազի դերը սթրեսային պատասխանում և միջավայրին հարմարման գործընթացներում: Միջավայրի սթրեսների ազդեցության պայմաններում կուտումնասիրվեն տարբեր ֆիզիոլոգիական, կենսաքիմիական, կենսաֆիզիկական և կենսաէներգետիկական գործոններ, այդ թվում՝ իոնային հոսքերի և ներբջջային իոնների կոնցենտրացիաների, ներբջջային pH-ի և պլազմային և միտոքոնդրիումային թաղանթների պոտենցիալի, թաղանթի ամբողջականության, վերօքս կոֆակտորների և նուկլեոտիդների (ԱՄՖ, ԱԿՖ, ԱԵՖ) ներբջջային քանակների, ածխածնի աղբյուրի և թթվածնի յուրացման, ինչպես նաև տարբեր մետաբոլիտների (էթանոլ, քացախաթթու, խնձորաթթու, սաթաթթու, գլիցերոլ և այլն) և ածխաթթու գազի արտադրության դինամիկայի և դրանց կարգավորող բանալիային ֆերմենտների ակտիվությունների, գեների տրանսկրիպցիայի և իոնային անցուղիների էքսպրեսիայի մակարդակների փոփոխությունները առանձին և համադրված սթրեսային պայմաններում: Հետազոտությունը կիրականացվի *S. cerevisiae* վայրի և մուտանտ (օր.՝ *Δnha1*, *Δpma1-007*, *Δvma1* և այլն) շտամների կիրառմամբ, ինչպես նաև կստացվեն այլ մուտանտներ CRISPR-Cas մեթոդներով՝ սթրես հարմարման մեջ առանձին անցուղիների դերը հասկանալու համար: Հավելյալ կուտումնասիրվի նաև արտա- և ներբջջային վերօքս վիճակների (վերականգնված թե օքսիդացած), pH-ի, թթվածնի մակարդակի և միտոքոնդրիումային պոտենցիալի (նորմա, ցրված կամ բացակայություն) ազդեցությունը սթրես հարմարման մեջ: Ծրագրի ղեկավարն է Բարիի Ալդո Մորո համալսարանի պրոֆ. Ն. Գուարազնելլան (Scopus h index 24), ով ունի միջազգային ճանաչում խմորասնկերի սթրեսային ֆիզիոլոգիայի և միտոքոնդրիումային գործառույթի ուսումնասիրության ոլորտում: Հետազոտական թիմը բաղկացած է երիտասարդ գիտնականներից՝ ներառյալ 2 ասպիրանտներ (1-ը՝ արտերկրից) և բակալավրիատի 2 ուսանողներ: Ծրագրի 1-ին 24 ամսում կազմակերպությունում նախատեսվում է ստեղծել նոր ստորաբաժանում, ծրագրի իրականացման 5-րդ տարում միջազգային գրախոսվող ամսագրերում տպագրել առնվազն 8 հոդված, այդ թվում՝ 2՝ Q1 և 2՝ Q2 քառյակի ամսագրերում: Նախագիծը կարող է իր ներդրումը ունենալ նաև կրթական ծրագրերում, ինչպես նաև հիմք հանդիսանալ նոր միջազգային համագործակցությունների ստեղծման համար:

5. ԵՊՀ Կենսաբանության ԳՀԻ Կենդանիների էվոլյուցիայի և զոոնոգ հիվանդությանների ուսումնասիրության լաբորատորիայի գիտաշխատող, կ.գ.թ. Մերի Վիկտորի Արզումանյանը ներկայացրեց «Հայաստանի անողնաշար կենդանիների գենոմիկ հարմարվողականությունը և նորարարական պանգենոմիկան» նախագիծը: Մերի Արզումանյանը նշեց, որ Հայաստանին բնորոշ է յուրահատուկ կենսաշխարհագրական դիրք և բազմազան կլիմայական պայմաններ, որոնք նպաստում են անողնաշար կենդանիների ֆաունայի եզակի էվոլյուցիոն գործընթացներին: Չնայած

իրենց էկոլոգիական կարևորությանը և էնդեմիզմի բարձր մակարդակին, Հայաստանի և Կովկասի անողնաշար կենդանիների մոտ հարմարվողական գենոմիկան մեծամասամբ ուսումնասիրված չէ: Վերջին տարիներին պանգենոմիկ մոտեցումները դարձել են հզոր գործիք՝ ներսեսակային և պոպուլյացիոն գենոմային ուսումնասիրության համար: Ի տարբերություն մեկ ռեֆերենս գենոմի վրա հիմնված վերլուծությունների, պանգենոմիկան համադրում է մեկ տեսակի տարբեր առանձնյակների գենոմներ՝ հնարավորություն տալով բացահայտել կառուցվածքային փոփոխությունները, գեների առկայության կամ բացակայության տարբերությունները և ֆունկցիոնալ գենոմային բազմազանությունը տարբեր պոպուլյացիաների միջև: Այս մոտեցումը տալիս է ամբողջական պատկեր էվոլյուցիոն ներուժի և հարմարվողական կարողությունների մասին: Առաջարկվող նախագիծը կենտրոնացնում է Հայաստանի էկոլոգիապես կարևոր անողնաշար կենդանիների խմբերի վրա՝ ներառյալ փոշոտողները, կենսացուցիչ տեսակները և էնդեմիկ տաքսոնները: Էկոլոգիական տվյալների և պանգենոմիկ վերլուծությունների համադրմամբ նպատակ է դրվել բացահայտել հարմարվողական մեխանիզմները շրջակա միջավայրի փոփոխությունների նկատմամբ: Այն թույլ կտա գնահատել էկոլոգիական գործոնների ազդեցությունը կենդանիների գենոմի վրա և հասկանալ հարմարվողականության ճկունությունն ու արագությունը: Պանգենոմիկայի գործիքների կիրառումը էկոլոգիական և էվոլյուցիոն խնդիրների լուծման համար Կովկասում առաջին փորձերից մեկն է: Նախագիծը կիրականացվի արտերկրյա համադրվաբար, Բոնի համալսարանի և Լայբնիցի կենսաբազմազանության փոփոխության վերլուծության ինստիտուտի (Գերմանիա, University of Bonn and Leibniz Institute for the Analysis of Biodiversity Change (LIB)) պրոֆեսոր Ալեքսանդր Սուհի (Alexander Suh, Scopus h-index: 37) հետ:

6. 5RG-3C170 դրամաշնորհային ծրագրի «Սնկային էքստրակտների և դեղերի հակաուռուցքային ակտիվացման սկրինինգ՝ օգտագործելով քաղցկեղային բջիջների կուլտուրաների 3D սֆերոիդ մոդելը» թիմի անդամ **Ինեսա Արմենի Ավագյանը** ներկայացրեց «Հակաօքսիդանտ կոմպոնենտների ակտիվացումը մմ-ալիքներով սնկային էքստրակտներում՝ պատասխանատու ուռուցքային բջիջների ապոպտոզի համար» նախագիծը: Ինեսա Ավագյանը նշեց, որ 5RG-3C170 դրամաշնորհի շրջանակում ստացված արդյունքների վերահաստատման, ինչպես նաև սնկային էքստրակտների ազդեցության մեխանիզմների բացահայտման նպատակով անհրաժեշտ է իրականացնել նաև նախակլինիկական հետազոտություններ: Այդ հետազոտությունները հնարավորություն կտան մշակել նոր պատրաստուկ, որը հարուստ կլինի հակաօքսիդանտներով և ֆերմենտներով և կարող է կիրառվել մի շարք հիվանդությունների կանխարգելման և բուժման գործընթացում: Նշվեց նաև, որ վերոնշյալ կենսաբանական ակտիվ նյութերը կարևոր դեր ունեն մարդու առողջության պահպանման գործում, իսկ դրանց անբավարարությունը կարող է հանգեցնել տարբեր պաթոլոգիաների: Մարդու օրգանիզմում հյուսվածքները չեն կարող de novo սինթեզել մեթիլ խմբեր, որոնց միակ աղբյուրն է հանդիսանում B վիտամինային կոմպլեքսը, որի անբավարարությունը խաթարում է տրանսմեթիլացման ցիկլը, նպաստելով մեթիոնինի և S-ադենոզիլմեթիոնինի սինթեզի նվազմանը: ԴՆԹ-ի հիպոմեթիլացումը կարող է հանգեցնել «լուռ» գեների և տրանսպոզոնային տարրերի ակտիվացմանը՝ բարձրացնելով քրոմոսոմային անկայունության և գենետիկական վնասների առաջացման հավանականությունը: Վերոնշյալ խնդիրները գտնվում են կիրառական կենսաֆիզիկայի և կենսաինֆորմատիկայի

ուորտների գիտական հետաքրքրությունների և հետազոտական տեսլականի շրջանակում: Ծրագրի շրջանակում նախատեսվում է համագործակցություն արտերկրի գործընկերոջ, մասնավորապես՝ Նեյլի Մնացականյանի (ԱՄՆ, Associate Professor, Penn State College of Medicine, Adjunct Assistant Professor, Yale School of Medicine) (h index-19) հետ, ով ունի 8 –ից ավել գիտական հրապարակում ՄԳՇ-ում (2021-2026 թթ.):

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել վերոնշյալ բոլոր նախագծերը ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր - 2026» մրցույթին մասնակցելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Մասնագիտական վերապատրաստում 2026» մրցույթին մասնակցելու համար հայտ ներկայացրած Հեղինե Գևորգյանը, Անի Հարությունյանը, Մարգարիտա Մկրտումյանը, Աննա Գրիգորյանը, Ռուզաննա Շուշանյանը, Սմբատ Մաղաքյանը: Ստորև ներկայացվում են մրցույթին հայտ ներկայացրած մասնակիցների հակիրճ ելույթները:

1. ԵՊՀ Կենսաբանության ԳՀԻ Մանրէաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի գիտաշխատող, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ, կ.գ.թ. Հեղինե Խաժակի Գևորգյանը ներկայացրեց «Թթվակայուն համակարգերի գենետիկական կարգավորումը և ֆունկցիոնալ բնութագրումը *Escherichia coli*-ում խմորման պայմաններում» նախագիծը: Հեղինե Գևորգյանը նշեց, որ *Escherichia coli*-ն ունի թթվակայուն համակարգեր, որոնք կարևոր դեր են խաղում pH հոմեոստազի պահպանման գործում թթվային պայմաններում: Չնայած այս համակարգերը լայնորեն ուսումնասիրվել են շնչառական պայմաններում, դրանց կարգավորումը և ակտիվությունը անթթվածին խմորման ընթացքում դեռևս բավարար չափով հասկանալի չեն: Նախագծի նպատակն է՝ պարզաբանել թթվակայուն համակարգերի գեների ակտիվացումը, արտահայտումը և ֆերմենտային ակտիվությունը թթվային սթրեսի տարբեր մակարդակներում անթթվածին խմորման ընթացքում: Ֆլուորեսցենցիայի վրա հիմնված պրոմոտորային ակտիվության վերլուծության, իրական ժամանակի քՊՇՌ-ի և ֆերմենտային ակտիվությունների փորձարկումների ինտեգրմամբ՝ ուսումնասիրությունը կապահովի գեների կարգավորումը թթվակայուն համակարգերի ակտիվության հետ կապող համապարփակ պատկերացում: Վերապատրաստումը իրականացվելու է Մյունխենի Լյուդվիգ-Մաքսիմիլիանի անվան համալսարանում, որպես ղեկավար հանդես է գալու պրոֆեսոր Կիրստեն Յունզը (h-ինդեքս՝ 43), տևողությունը՝ 2 ամիս:

2. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասպիրանտ, Մանրէաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող Անի Ալեքսանդրի Հարությունյանը ներկայացրեց « ZnO նանոմասնիկների կենսաբանական և ոչ կենսաբանական ֆունկցիոնալացման ազդեցությունը կենսատեխնոլոգիապես հեռանկարային ցիանաբակտերիաների վրա» նախագիծը: Անի Հարությունյանիը նշեց, որ ներկայումս նանոմասնիկները լայնորեն կիրառվում են

կենսատեխնոլոգիայում և կենսաբժշկության մեջ: Հետաքրքրություն է ներկայացնում նանոմասնիկների մակերեսների ֆունկցիոնալացումը, ինչը կարող է բարելավել նանոմասնիկների կայունությունը, կանխարգելել ագրեգացումը, խթանել կենսաբանական ակտիվությունը և փոխազդեցությունը կենսաբանական համակարգերի հետ: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ֆունկցիոնալացված ZnO նանոմասնիկների ազդեցությունը կենսատեխնոլոգիայես հեռանկարային ցիանաբակտերիաների, մասնավորապես՝ *Arthrospira (Spirulina) platensis*-ի, ձևաբանության, աճի, կենսաքիմիական կազմի և օքսիդային սթրեսին արձագանքի վրա: Պարզաբանվելու է ցիանոբակտերիաների վրա ZnO նանոմասնիկների ազդեցության կախվածությունը թե՛ նանոմասնիկի հիմնական նյութից, թե՛ դրանց մակերեսի ֆունկցիոնալացման բնույթից: Ցիանոբակտերիաների միջոցով նանոմասնիկների ֆունկցիոնալացումը կարող է փոխել նանոմասնիկ-բջջ փոխազդեցությունը՝ անդրադառնալով միկրոօրգանիզմների աճի, կենսաքիմիական կազմի և օքսիդային սթրեսին արձագանքի վրա: Ստացված արդյունքները համեմատվելու են ոչ կենսաբանական ֆունկցիոնալացմամբ ստացված նանո-մասնիկների հետ, այդ նպատակով օգտագործվելու են պոլիմերներ (պոլիվինիլպիրոլիդոն (PVP) և պոլիէթիլենգլիկոլ (PEG)): Հետազոտությունները նախատեսվում է իրականացնել «Մասնագիտական վերապատրաստում 2026» մրցույթի շրջանակներում Մոլդովայի տեխնիկական համալսարանի Մանրեաբանության և կենսատեխնոլոգիայի ինստիտուտի տնօրեն, կ.գ.դ. Լիլիանա Չեպոյի ղեկավարությամբ: Դոկտոր Լիլիանա Չեպոյի հետ համագործակցությունը և Մանրեաբանության և կենսատեխնոլոգիայի ինստիտուտում առկա ռեսուրսները հնարավորություն կտան հետազոտությունները իրականացնել գիտական բարձր մակարդակով, կնպաստեն փորձնական հմտությունների ձեռք բերմանը և նորարարական մեթոդների յուրացմանը:

3. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության և սնկաբանության ամբիոնի առկա ասպիրանտ, Կենսաբանության ԳՀԻ Մնկերի, բույսերի բազմազանության և կենսաակտիվության գնահատման լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող Մարգարիտա Գևորգիի Մկրտումյանը ներկայացրեց «Տարբեր նշանակության փակ տարածքների օդի միկրոբիոտայի ուսումնասիրությունը և անջատված միկրոմիցետների մորֆոլոգիական և մոլեկուլազենետիկական նույնականացումը» նախագիծը: Մարգարիտա Մկրտումյանը, նշեց, որ փակ տարածքների օդի որակը հանդիսանում է կարևոր գործոն մարդու առողջության, ինչպես նաև նյութական արժեքների պահպանման տեսանկյունից: Հայտնի է, որ օդում շրջանառվող միկրոմիցետները կարող են առաջացնել ալերգիկ, ինչպես նաև մի շարք միկոտիկ հիվանդություններ: Միկրոմիցետները հանդիսանալով միկոդետրուկտորներ նպաստում են պատմական արժեք ունեցող նյութերի կենսավնասմանը և կենսաքայքայմանը, հետևաբար օդի միկրոբիոտայի ուսումնասիրությունը դառնում է առաջնահերթ գիտական խնդիրներից մեկը: Չնայած դրա կարևորությանը, ՀՀ-ում փակ տարածքների միկրոբիոտայի վերաբերյալ համակարգված հետազոտությունները սահմանափակ են, ինչը պայմանավորում է նման ուսումնասիրությունների անհրա-ժեշտությունը: Առաջարկվող թեմայի նպատակն է ուսումնասիրել փակ տարածքների օդի միկրոբիոտան, իրականացնել անջատված միկրոմիցետների նույնականացում կիրառելով ինչպես դասական՝ մորֆոլոգիական, այնպես էլ մոլեկուլազենետիկական ժամանակակից մեթոդներ: Նախատեսվում է իրականացնել օդի սնկերով

աղտոտվածության գնահատում տարբեր փակ տարածքներում, միկրոմիցետների անջատում և մաքուր կուլտուրաների ստացում, մորֆոլոգիական և մոլեկուլազենետիկական նույնականացում և սնկերի նոր տեսակներով բանկի համալրում, տեսակային բազմազանության և տարածվածության վերլուծություն: Նախագիծը լիովին իրագործելի է՝ հաշվի առնելով կիրառվող մեթոդների հասանելիությունը և փորձարարական բազայի առկայությունը: Օդի նմուշառումը, միկրոմիցետների անջատումը և մորֆոլոգիական նույնականացումը իրականացվելու են Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի, կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտի սնկերի, բույսերի բազմազանության և կենսաակտիվության գնահատման լաբորատորիայում: Վերապատրաստման շրջանակներում մոլեկուլազենետիկական վերլուծությունը (ITS սեքվենավորում) կիրականացվի համագործակցող լաբորատորիայում: Վերապատրաստումը նախատեսվում է իրականացնել Սերբիայի Հանրապետության Նովի Սադի համալսարանում, որն ունի համապատասխան լաբորատորիա (ProFungi) և միկրոկենսաբանական ու մոլեկուլային հետազոտությունների ոլորտում մեծ փորձ: Աշխատանքը կիրականացվի պրոֆեսոր Մայա Կարամանի ղեկավարությամբ՝ հ-ինդեքսը 27: Վերապատրաստումը հնարավորություն կտա տիրապետել ժամանակակից մեթոդներին և կնպաստի ՀՀ-ում սնկաբանական հետազոտությունների մակարդակի բարձրացմանը, նոր մեթոդների ներդրմանը և միջազգային գիտական համագործակցության զարգացմանը:

4. ԵՊՀ Կենսաբանության ԳՀԻ Մարդու և կենդանիների ինտեգրատիվ և հարմարողական ֆիզիոլոգիայի լաբորատորիայի գիտաշխատող, մարդու ու կենդանիների մորֆոլոգիայի ու ֆիզիոլոգիայի ամբիոնի ասիստենտ **Աննա Վլադիմիրի Գրիգորյանը** ներկայացրեց «Իմունոհիստոքիմիական և իմունոֆլուորեսցենտ մեթոդների կիրառումը տարբեր սթրեսածին գործոններով պայմանավորված հյուսվածքային փոփոխությունների ուսումնասիրություններում» նախագիծը: Կենսաբանության ԳՀԻ գիտաշխատող **Աննա Գրիգորյանը** ներկայացրեց Չեխիայի Մասարիկի համալսարանի Հյուսվածքաբանության և սաղմնաբանության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ալես Համփլի հետ ձեռք բերված պայմանավորվածությունը, որով նախատեսվում է իրականացնել վերապատրաստում «Իմունոհիստոքիմիական և իմունոֆլուորեսցենտ մեթոդների կիրառումը տարբեր սթրեսածին գործոններով պայմանավորված հյուսվածքային փոփոխությունների ուսումնասիրություններում» թեմայով: **Աննա Գրիգորյանը** նշեց, որ նախագծի նպատակն է՝ ուսումնասիրել իմունոհիստոքիմիական և իմունոֆլուորեսցենտային ժամանակակից կենսաթժկական հետազոտությունների նոր մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս հյուսվածքներում հայտնաբերել որոշակի սպիտակուցներ, բորբոքային մեդիատորներ, բջջային մարկերներ և ազդանշանային մոլեկուլներ: Կիրականացվի Olympus Fluoview 500 կոնֆոկալ լազերային սկանավորող մանրադիտակի և ImageJ/FIJI ֆլուորեսցենտ պատկերների վերլուծության ծրագրերի յուրացում:

5. ԵՊՀ Կենսաբանության ԳՀԻ Մարդու և կենդանիների ինտեգրատիվ և հարմարողական ֆիզիոլոգիայի լաբորատորիայի գիտաշխատող **Ռուզաննա Արսենի Շուշանյանը** ներկայացրեց «Գլխուղեղի կորտիկալ նեյրոնային շղթայի դինամիկայի ուսումնասիրություն երկֆոտոնային պատկերավորման և կալցիումային ազդանշանի վերլուծության միջոցով» նախագիծը: **Ռուզաննա Շուշանյանը** ներկայացրեց Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի դոկտոր Ուիլյամ Զեյգերի հետ ձեռք բերված պայմանավորվածությունը, որով նախատեսվում է իրականացնել վերապատրաստում «Գլխուղեղի կորտիկալ նեյրոնային շղթայի դինամիկայի ուսումնասիրություն երկֆոտոնային պատկերավորման և կալցիումային ազդանշանի վերլուծության միջոցով» թեմայով:

Սույն նախագծի նպատակն է ուսումնասիրել կեղևային նեյրոնային ցանցերի դինամիկան՝ համադրելով երկֆոտոն պատկերավորումը և կալցիումային ազդանշանների քանակական վերլուծությունը: Հետազոտությունը կենտրոնանալու է նեյրոնային ակտիվության օրինաչափությունների, ֆունկցիոնալ կապերի և տարբեր ֆիզիոլոգիական պայմաններում ակտիվության փոփոխությունների գնահատման վրա: Նախագծի շրջանակում հնարավորություն կստեղծվի ձեռք բերել գործնական հմտություններ ստերեոտաքսիկ վիրահատությունների, կրանիալ պատուհանի տեղադրման, երկֆոտոն պատկերավորման և տվյալների վերլուծության ոլորտներում:

6. ԵՊՀ Կենսաբանության ԳՀԻ Կենդանիների Էվոլյուցիայի և զոոնոգ հիվանդությունների ուսումնասիրության լաբորատորիայի լաբորանտ Սմբատ Սերգեյի Մաղաքյանը ներկայացրեց «Կովկասյան ժայռային մողեսի ռեֆերենս գենոմի հավաքումը և քրոմոսոմների կառուցվածքային կազմակերպումը» նախագիծը: Սմբատ Մաղաքյանը նշեց, որ վերապատրաստման նպատակն է ձեռք բերել ժամանակակից գիտական հմտություններ գենոմի քրոմոսոմային մակարդակով ուսումնասիրման ոլորտում: Վերապատրաստումը կիրականացվի Ավստրիայի Վիեննայի անասնաբուժական բժշկության համալսարանում՝ պրոֆեսոր Պամելա Բուրգերի ղեկավարությամբ: Վերապատրաստման հիմնական ուղղությունն է գենոմների հավաքումը և վերլուծությունը՝ կիրառելով առաջատար տեխնոլոգիաներ (օր.՝ երկար ընթերցումների սեքվենավորում և քրոմոսոմային մակարդակի կառուցվածքային կազմակերպման մեթոդներ): Հատուկ ուշադրություն կդարձվի Կովկասյան ժայռային մողեսների (*Darevskia* ցեղ) գենոմային հետազոտություններին, որոնք հանդիսանում են կարևոր մողել էվոլյուցիայի և բազմացման տարբեր ռազմավարությունների (սեռական և կուսածին) ուսումնասիրման համար: Այս խմբի համար բարձրորակ գենոմային ռեսուրսների ստեղծումը հնարավորություն կտա ավելի լավ հասկանալ քրոմոսոմային կազմակերպումը, գենոմի կառուցվածքը և էվոլյուցիոն գործընթացները: Ստացված գիտելիքներն ու հմտությունները կկիրառվեն Հայաստանում իրականացվող հետագա հետազոտություններում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել վերոնշյալ բոլոր նախագծերը ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Մասնագիտական վերապատրաստում 2026» մրցույթին մասնակցելու համար:

2. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի ուսումնական պլաններում նախատեսվող փոփոխությունների վերաբերյալ հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ Կ.Գ.Պ., ղոցենտ Կարեն Ղազարյանը, ֆակուլտետի մեթոդխորհրդի նախագահ՝ Կ.Գ.Թ., ղոցենտ Աստղիկ Ղազարյանը: Ա.Ղազարյանը գիտական խորհրդի անդամներին ներկայացրեց կենսաբանության ֆակուլտետի մեթոդական խորհրդի նիստերում (19.02.2026 N5, 04.03.2026 N6, 20.03.2026 N7) քննարկվող փոփոխությունները.

- «Կենսաբանություն» բակալավրիատի կրթական ծրագրի առկա ուսուցման 2023-2027թթ., 2024-2028թթ., 2025-2029թթ., 2026-2030թթ. և հեռակա ուսուցման 2023-2028թթ., 2024-2029թթ., 2025-2030թթ., 2026-2031թթ. ուսումնական պլաններում «Կենսառեսուրսներ» առարկան վերանվանել «Կենսառեսուրսներ. բույսեր և սնկեր»,

- «Կենսաբանություն» բակալավրիատի կրթական ծրագրի առկա ուսուցման 2024-2028թթ և հեռակա ուսուցման 2023-2028թթ ուսումնական պլաններում կատարել կամընտրական առարկաների վերաշխում 3 կրթական բլոկերում,
- «Կենսաբանություն» բակալավրիատի կրթական ծրագրի 2026-2030թթ ուսումնական պլանում իրականացնել առարկաների դասախոսության և լաբորատոր աշխատանքների ժամերի վերաբաշխում:

2025-2029թթ ուսումնական պլան			2026-2030թթ ուսումնական պլան		
Դասընթացի անվանումը	Լս./կրդ.	Կիսամյակ Դաս./լաբ. /գործն.	Դասընթացի անվանումը	Լս./կրդ.	Կիսամյակ Դաս./լաբ. /գործն.
Հյուսվածաբանություն և զարգացման կենսաբանություն /մասնագիտական կառուցամաս/	60/6	3-րդ կիսամյակ /20դաս+40 լաբ/	Հյուսվածաբանություն և զարգացման կենսաբանություն /մասնագիտական կառուցամաս/	60/6	3-րդ կիսամյակ /30դաս+30 լաբ/
Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա 2 /մասնագիտական կառուցամաս/	60/6	4-րդ կիսամյակ /20դաս+40 լաբ/	Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա 2 /մասնագիտական կառուցամաս/	60/6	4-րդ կիսամյակ /30դաս+30 լաբ/

- «Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա» բակալավրիատի ծրագրի 2026-2030թթ ուսումնական պլանում իրականացվել է ինչպես նոր առարկաների ներմուծում, այնպես էլ առարկաների անվանումների և կիսամյակների փոփոխություններ

2025-2029թթ ուսումնական պլան			2026-2030թթ ուսումնական պլան		
Դասընթացի անվանումը	Լս./կրդ.	Կիսամյակ Դաս./լաբ. /գործն.	Դասընթացի անվանումը	Լս./կրդ.	Կիսամյակ Դաս./լաբ. /գործն.
Կենսաքիմիա – 3 /մասնագիտական կառուցամաս, պարտադիր/	30/3	5-րդ Կիսամյակ 15դ./15լ.	-	-	-
Մոլեկուլային կենսաբանություն /մասնագիտական կառուցամաս, կամընտրական/	60/6	7-րդ կիսամյակ 30 դ./20լ. /10 գ	Մոլեկուլային կենսաբանություն /մասնագիտական կառուցամաս, պարտադիր/	30/3	5-րդ կիսամյակ 10 դ./20 լ.
-	-	-	Կենսաինֆորմատիկայի հիմունքներ	60/6	5-րդ կիսամյակ 30 դ./30 լ.

			/մասնագիտական կառուցամաս, կամբնտրական/		
Մանրէների նյութափոխանակու- թյան ներածություն /մասնագիտական կառուցամաս, կամբնտրական/	60/6	5-րդ կիսամյակ 30 դ./30 լ.	Մանրէների նյութափոխանա- կություն /մասնագիտական կառուցամաս, կամբնտրական/	60/6	5-րդ կիսամյակ 30 դ./30 գ.
Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա /մասնագիտական կառուցամաս, կամբնտրական/	60/6	5-րդ կիսամյակ 30 դ./20 լ./10 գ	Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա /մասնագիտական կառուցամաս, կամբնտրական/	60/6	7-րդ կիսամյակ 30 դ./20 լ./10 գ
Նուկլեինաթթուների կենսաքիմիա /մասնագիտական կառուցամաս, կամբնտրական/	60/6	8-րդ կիսամյակ 30դ/10 գ/20 լ	Նուկլեինաթթուների կենսաքիմիա /մասնագիտական կառուցամաս, կամբնտրական/	60/6	8-րդ կիսամյակ 40 դ./20 լ.
Հյուսվածաբանու- թյուն և զարգացման կենսաբանություն /մասնագիտական կառուցամաս/	60/6	3-րդ կիսամյակ /20դաս+40 լաբ/	Հյուսվածաբանու- թյուն և զարգացման կենսաբանություն /մասնագիտական կառուցամաս/	60/6	3-րդ կիսամյակ /30դաս+30 լաբ/
Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա /մասնագիտական կառուցամաս/	60/6	4-րդ կիսամյակ /20դաս+40 լաբ/	Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա /մասնագիտական կառուցամաս/	60/6	4-րդ կիսամյակ /30դաս+30 լաբ/

- «Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա» բակալավրիատի կրթական ծրագրի 2026-2030թթ ուսումնական պլանում փոփոխվել են ստորև ներկայացված առարկաների քննական ձևերը.

Դասընթացի անվանումը	Լս./կրդ.	Կիսամյակ Դաս./լաբ. /գործն.	Քննական ձև 2025-2029թթ ուս. պլանում	Քննական ձև 2026- 2030թթ ուս. պլանում
Կենսաքիմիայի և կենսատեխնոլոգիայի ներածություն	60/6	1-ին Կիսամյակ 45դ./15լ.	Եզր. գն.	Առանց եզր. գն.
Մոլեկուլային կենսաբանություն	30/3	5-րդ կիսամյակ 10 դ./20 լ.	Եզր. գն.	Առանց ընթաց.
Կենսանվտանգության հիմունքներ	30/3	4-րդ կիսամյակ 30դ	Եզր. գն.	Առանց ընթաց.

- «*Ընդհանուր և բժշկական կենսաքիմիա*» մագիստրոսական կրթական ծրագրի 2026-2028թթ ուսումնական պլանում առաջարկվեց կատարել հետևյալ փոփոխությունները՝

2025-2027թթ ուսումնական պլան			2026-2028 ուսումնական պլան		
Դասընթացի անվանումը	Լս./կր դ.	Կիսամյակ Դաս./լաբ. /գործն.	Դասընթացի անվանումը	Լս./կրդ.	Կիսամյակ Դաս./լաբ. /գործն.
Մասնագիտական դասընթացներ (պարտադիր)					
Ֆերմենտների աշխատանքի մոլեկուլային մեխանիզմները	60/6	1-ին կիսամյակ /30 դաս.+30 լաբ./	Կլինիկական ֆերմենտաբանություն	30/3	1-ին կիսամյակ /15 դաս.+15 լաբ./
Նյութափոխանակային ցանցեր և հոսքեր	30/3	1-ին կիսամյակ /20 դաս.+10 լաբ./	Նյութափոխանակային ցանցեր և հոսքեր	60/6	1-ին կիսամյակ /30 դաս.+30 լաբ./
Մանրէների նյութափոխանակության կարգավորում	60/6	1-ին կիսամյակ /45 դաս.+15 լաբ./	Մանրէների նյութափոխանակության կարգավորում	60/6	1-ին կիսամյակ /30 դաս.+30 լաբ./
Մասնագիտական կառուցամաս (կամընտրական)					
Գենետիկական ճարտարագիտություն և ԴՆԹ ռեկոմբինացում	30/3	3-րդ կիսամյակ /30 դաս./	Գենետիկական ճարտարագիտություն և ԴՆԹ ռեկոմբինացում	30/3	3-րդ կիսամյակ /15 դաս.+15 լաբ./

- «*Բժշկական սնկաբանություն և կիրառական բուսաբանություն*» մագիստրոսական կրթական ծրագրի 2026-2028թթ ուսումնական պլանում կատարել հետևյալ փոփոխությունները՝
 - «Թունավոր բույսեր և սնկեր» առարկան վերանվանել «*Թունավոր բույսեր և սնկեր, դրանց կիրառումը բժշկության մեջ*»,
 - «Օգտակար բույսերի բազմազանություն և կիրառումն արտադրությունում» առարկան վերանվանել «*Օգտակար բույսերի բազմազանությունը և դրանց կիրառական նշանակությունը*»,
 - «Սնկերը կենսատեխնոլոգիայում» առարկան վերանվանել «*Դեղասնկերը կենսատեխնոլոգիայում*»,
 - «Սննդամթերքի անվտանգության ցուցանիշների հիմնական խմբերը և դրանց որոշումը փորձարարական լաբորատորիայում» առարկան փոխարինել «*Սնկերի բարկոդավորում*» առարկայով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին կենսաբանության ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի ուսումնական պլաններում առաջարկվող փոփոխությունները կատարելու համար:

3. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի 2016-2020 թթ. հեռակա ասպիրանտ Գայանե Հովհաննեսի Պետրոսյանի ատենախոսության թեմայի վերահաստատման և գիտական ղեկավարի փոփոխության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ Գայանե Պետրոսյանը, ով ներկայացրեց ատենախոսության հաստատված վերնագիրը՝ «Ռենտգենյան ճառագայթման ենթարկված *Candida guilliermondii* HPI-4 խմորասնկային բջիջներում ազոտային և ֆոսֆատային փոխանակության որոշ գործընթացների բնութագրումը», Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ և գիտական ղեկավարին՝ կ.գ.դ., պրոֆ. Լ.Հ. Նավասարդյան: Գայանե Պետրոսյանը նշեց, որ գիտական ղեկավարի աշխատանքային գործունեության դադարեցման պատճառով հնարավոր չէր ատենախոսական աշխատանքը հասցնել վերջնական ձևավորման և պաշտպանության ներկայացման փուլին, հետևաբար անհրաժեշտություն առաջացավ փոխել ատենախոսության թեման և հաստատել նոր ղեկավար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնի կարծիքը՝ վերահաստատել «Լ-արգինինի նյութափոխանակային ուղին որպես հակաքաղցկեղային ազդեցության առանցքային թիրախ կրծքագեղձի քաղցկեղի in vitro և in vivo մոդելներում» թեման, Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ, գիտական ղեկավար նշանակել Կենսաբանության ԳՀԻ Հիմնարար և ախտաբանական կենսաքիմիայի լաբորատորիայի վարիչ, կ.գ.թ. Ն. Վ. Ավթանդիլյանին:

4. ԼՍԵՑԻՆ՝ 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առկա և հեռակա ուսուցմամբ ուսանողների առցանց հարցումների քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կարեն Ղազարյանը: Նա խոսեց ԵՊՀ-ում պարբերաբար անցկացվող ուսանողական հարցումների մասին և կարևորեց այդ գործընթացի դերը ֆակուլտետում դասավանդման որակի և արդյունավետության գնահատման գործում: Հարցումների նպատակն է քննարկման արդյունքում մշակել համապատասխան առաջարկություններ և երաշխավորություններ, որոնք ուղղված կլինեն դասախոսի դասավանդման որակի բարելավման համար: Ըստ Կարեն Ղազարյանի խոսքի, հարցումների և ուսանողների կողմից ներկայացված կարծիքների օգնությամբ, մենք կարող ենք բացահայտել ներկայիս դասավանդման գործընթացում առկա խնդիրներն ու բացերը, մշակել առկա թերությունների շտկման և բարելավման ուղիները:

Ղեկանը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առկա և հեռակա ուսուցմամբ ուսանողների առցանց հարցումների արդյունքները, մատնանշելով որոշ թերություններ: Նիստի ժամանակ խոսվեց նաև այն մասին, որ հարցումներին մասնակցում են քիչ

թվով ուսանողներ, հետևաբար ինչպես դասախոսներին տրվող միավորները, այնպես էլ կարծիքները կարող են լինել ոչ օբյեկտիվ:

Անցկացնելով հարցումների արդյունքների պարբերաբար քննարկումներ հնարավոր կլինի բարելավել դասավանդման մեթոդաբանությունը, կատարել բովանդակության մեջ ճշգրտումներ, իրականացնել դասավանդման որակը բարձրացնելու ուղղությամբ աշխատանքներ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդհունել ի գիտություն և լինել հետևողական ուսանողական առցանց հարցումների արդյունքների և կարծիքների քննարկման գործում:

Գիտական խորհրդի ժամանակ քննարկվեցին նաև որոշ ընթացիկ հարցեր, այդ թվում ԵՊՀ-ի կենսաբանության ֆակուլտետում ավանդույթ դարձած և արդեն երրորդ անգամ կազմակերպվող «Բաց դռներ-2026» միջոցառման մասին, որը նախատեսված է ինչպես Երևան քաղաքի, այնպես էլ ՀՀ մարզերի միջնակարգ և ավագ դպրոցների աշակերտների համար:

Կարեն Ղազարյանը նշեց, որ ապրիլի 10-ին արդեն իսկ իրականացվել է 1 միջոցառում և ևս մեկը նախատեսվում է ապրիլի 17-ին: Ապրիլի 10-ի միջոցառման ժամանակ կազմակերպվել է 2 այց՝ ժամը 13.00 և 15.00-ին, որին մասնակցել են Երևան քաղաքի և մարզերի 35 դպրոցների 400-ից ավելի աշակերտներ: Հաշվի առնելով ճանաչողական այցին մասնակցելու ցանկացողների զգալի թիվը, որոշվեց ապրիլի 17-ին կազմակերպել ճանաչողական այց նաև ժամը 11.00-ին:

Կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կարեն Ղազարյանը ևս մեկ անգամ փաստեց այն մասին, որ նման միջոցառումները կրելով շարունակական բնույթ, հնարավորություն են տալիս հանրակրթական դպրոցներում սովորող աշակերտներին ծանոթանալ կենսաբանության ֆակուլտետի կառուցվածքի, կրթական ծրագրերի, գործող լաբորատորիաների հետ և ստանալ մասնագիտական ու աշխատանքային հեռանկարների վերաբերյալ տեղեկատվություն, ինչը հետագայում կնպաստի և կօգնի դպրոցականների մասնագիտական կողմնորոշման հարցում:

Գիտական խորհրդի նախագահ, կ.գ.դ., դոցենտ՝ **Կ.Ա. Ղազարյան**

Գիտական խորհրդի քարտուղար, կ.գ.թ., դոցենտ՝ **Է.Վ. Շահազիզյան**

